

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Տաթևիկ Աշյան – Միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի ավագ մասնագետ՝ բաժնի պետի պարտականությունները կատարող

2) Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Պրահա (Չեխիայի Հանրապետություն), 2025 թվականի հունիսի 2-ից մինչև 5-ը ներառյալ

3) Հրավիրող կողմը.

Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

4) Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվող տեխնիկական աջակցության շրջանակներում ուսուցողական այցին:

5) Քննարկված թեմաները.

Ուսուցողական այցի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Ներդրումների պաշտպանություն և ներդրումային արբիտրաժ
- Կրկնակի հարկման համաձայնագրերի կնքման քաղաքականություն
- Թվային ծառայությունների հարկում
- Հարկման բազայի խեղաթուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ բազմակողմ կոնվենցիային առնչվող հարցեր (օր.՝ համակցված տեքստերի մշակում և հրապարակում)
- Գլոբալ նվազագույն հարկ
- Գնումների գործընթացների աուդիտ

- ԱԱՀ-ն էլեկտրոնային առևտրի և թվային դարաշրջանում
- Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության ոլորտում, մասնավորապես դոնորների հետ աշխատանքների համակարգման հարցում Չեխիայի ֆինանսների նախարարության փորձի ուսումնասիրություն

6) Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Չեխիայի ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների ներկայացուցիչների կողմից հանգամանալից ներկայացվեց վերոհիշյալ թեմաները շնորհանդեսների ձևաչափով: Դասախոսությունները կրում էին ինտերակտիվ բնույթ և հայկական կողմի մասնակիցներն ակտիվ ներգրավվում էին քննարկումներին՝ զուգահեռ ներկայացնելով Հայաստանում համապատասխան ոլորտներում իրականացվող աշխատանքները, բարեփոխումները և առկա իրավիճակը:

7) Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8) Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները.

Նկատի ունենալով բազմամյա համագործակցությունը տեխնիկական աջակցության շրջանակներում Չեխիայի ֆինանսների նախարարության հետ՝ չեխական կողմը լիահույս էր համագործակցության և նմանատիպ փորձի փոխանակման շարունակականության ապահովման համար:

9) Ստորագրությունը, ամսաթիվը:



Տաթևիկ Աշյան

10 հունիսի, 2025թ.